

ՀԱՅՏՈՅՈՂՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ան, որ ֆրիստոնեան կ'անարգէ, զԱստուած կ'անարգէ եւ ով, որ ֆրիստոնեային հայհոյէ, Քրիստոսի հայհոյած կ'ըլլայ: Քրիստոս ըսաւ. «Մնացէ՛ք մէջս եւ ես ձեր մէջ: Ան, որ ուտէ մարմինս եւ խմէ արիւնս, ան մէջս պիտի բնակի եւ ես իր մէջ» (Յովհ. 6. 57): Պօղոս առաքեալ եւս կ'ըսէ. «Քրիստոնեաները մարմինն են Քրիստոսի, անդամներ՝ անոր անդամներէն: Աստուծոյ տանար են ֆրիստոնեաները եւ Աստուծոյ Հոգին կը բնակի անոնց մէջ» (Ա. Կորթ. 12.27):

Քրիստոս Աստուած իր անունը դրած է ֆրիստոնեաներուն վրայ եւ Քրիստոս ու ֆրիստոնեաները մէկ են: Ան, որ անարգէ ֆրիստոնեային բերանը, անարգած կ'ըլլայ Աստուծոյ անունը, գորբերանով կ'օրհնեն եւ նոյն բերանով հաղորդութիւն կ'առնեն: Ան, որ հաւատքը անարգէ, - հաւատքը Աստուած է եւ մկրտութեան օրը կը հաւատանք Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին -> հաւատքին հայհոյելով զԱստուած անարգած կ'ըլլայ: Ան, որ նախատէ մեռելին գերեզմանը, նախատած կ'ըլլայ Խաչը, Աւետարանը, հաղորդութիւնը եւ Քրիստոսի գերեզմանը, որովհետեւ ֆրիստոնեան Խաչով, Աւետարանով կը թաղուի՝ բերանին մէջ ունենալով Ս. հաղորդութիւն, որ Քրիստոսն է, իսկ մարմինն ու ոսկորները կնիւնուած կ'ըլլան միւռոնով, որ դարձեալ Քրիստոսն է:

Արդ, յայտնի եղաւ, որ յիշոց ընողը Աստուծոյ հայհոյիչ է: Հետեւաբար պետք է ֆրիստոնեայ կոչել զայն մինչեւ, որ դառնայ չար սովորութեանն եւ պահով, աղօթով ֆաւէ իր մեղքերը եւ Քրիստոսի շնորհով արդարանայ:

ԽԱՉԱԶԱՆԳԻՍ




Ձերմ աղերսանք մըն է անիկա ուղղուած Հօր Աստուծոյ, որպէսզի իր օրհնութիւնը իջեցնէ ջուրին վրայ, եւ բոլոր խմողները իրենց հիւանդութեանց բժշկութիւն գտնեն եւ ցաւերու՝ փարատում:

Բոլոր հօտերն ու նախնիները այդ ջուրէն խմելով ցաւերէ գերծ ըլլան եւ ծնանին:

Եւ օրհնուած այս ջուրը բոլոր տունկերուն ու բոյսերուն վրայ որ ցօղուուի՝ ժանգէն, թրթուրէն եւ ամէն պատահարներէ անվնաս մնան, եւ աւելի պտղաբեր դառնան, մարդոց բարիքին համար:

Այս բոլորէն ետք, կը զգանք թէ հաւատքով առ լեցուն կիներն ու մամիկները ինչպիսի երկիրաձուլութեամբ ունայ մը ջուր պիտի ուզէին խմել իրենց ցաւերուն եւ առողջութեան ի խնդիր: Ամէն:



ԶՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022

ԹԻՒ 40

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 17.7-14: Բ. Կր. 13.5-13: Մր. 11.27-33

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 11.27-33

Յիսուս եւ իր աշակերտները դարձեալ Երուսաղէմ եկան:

Մինչ Յիսուս տաճարին մէջ կը պտըտէր, իրեն մօտեցան քահանայապետները, օրէնքի ուսուցիչներն ու երէցները եւ հարցուցին. «Ի՞նչ իշխանութեամբ կը կատարես այս բաները: Ո՞վ քեզի այդ իշխանութիւնը տուաւ»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Լա՛ւ, ձեզի պիտի ըսեմ, թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ ասոնք, եթէ դուք ալ իմ հարցումիս պատասխանէք: Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը Աստուծմէ՞ տրուած էր իրեն՝ թէ՞ մարդոցմէ: Պատասխանեցէ՛ք տեսնեմ»:

Անոնք սկսան իրարու միջեւ խորհիլ եւ ըսել. «Եթէ ըսենք՝ Աստուծմէ տրուած էր, մեզի պիտի ըսէ ինչո՞ւ չհաւատացիր իրեն, իսկ մարդոցմէ էր չենք կրնար ըսել»: Այսպէս կ'ըսէին՝ ժողովուրդէն վախճալով, որովհետեւ ամէն մարդ գիտէր, թէ Յովհաննէս ճշմարտապէս մարգարէ էր: Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Չենք գիտեր»:


Յիսուս ալ իրենց հարցումին պատասխանելով ըսաւ. «Այն ատեն ես ալ ձեզի չեմ ըսեր, թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները»:

ԽԱՂԱՂ ԿԵԱՆՔ ԽՆԻԲԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Կեանքի առաջնորդող եւ խաղաղութիւն պարգեւող մեր Աստուածը, Զրիստո՛ս, դո՛ւն առաջնորդէ՛ մեզ, որպէսզի արդարութեան քու ճամբաներդ քալենք եւ քու ողորմութեամբդ՝ խաղաղութեամբ հասնինք կեանքի եւ փրկութեան նաւահանգիստը, որովհետեւ դո՛ւն ես մեր օգնականն ու փրկիչը: Զեզի՛ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏԱՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ



ՍՐԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽՐԱՏ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Երբեք մի՛ ունենաք խարդախութիւն եւ կեղծաւոր խորհուրդներ, անհաւատ ու անսուրբ վարք, որոնք կորուստի պատճառ են, այլ՝ միշտ ձեր հոգիներուն մէջ կրեցէ՛ք լուսաւոր սրբութիւնը անբիծ սիրոյ երախտիքներով՝ ծաղկելով առաքինասէր վարքով եւ պսակուելով յաւիտենական յոյսով ի գովեստ Աստուծոյ փառքին:

Քանզի Հոգիի կրակով անարատ սրբութեան հասնելու Ամենասուրբ երրորդութեան օթեանը կ'ըլլանք երկրի վրայ: Որովհետեւ բոլոր սիրանքներու եւ առաքինութիւններու զարդը տեսանելի ու անտեսանելի՝ հոգիի եւ մարմնի սրբութիւնն է:

Ամենայն արդարութեան, արիւթեան թագը եւ պարծանքներու պսակը միշտ սրբութիւնն է, նաեւ երկնաւորներու ու երկրաւորներու բոլոր դասերու փառքը, պատիւն ու մեծաբանքը սրբութիւնն է, որ կը մօտեցնէ եւ հարազատ կը դարձնէ Քրիստոսի՝ մեր Աստուծոյն եւ բոլոր երկնային զօրքերուն:

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

Իմաստութիւնը ցանապարհներուն սկիզբը կը փառաբանուի եւ հրապարակներուն վրայ բարձրաձայն կը հռչակուի, պարիսպներուն բարձունքէն կը փարփուի, ամրոցներուն դռներուն կը յայտարարուի եւ ֆաղափներու դարպասներուն համարձակօրէն կը խօսուի:

(Առակաց Ա. 20-21)

Տասներկու աշակերտներու կողմէն, Յիսուս նաեւ կ'ընտրէ 72 աշակերտներ եւ կու տայ անոնց նոյն իշխանութիւնը, զոր տուած էր իր տասներկու աշակերտներուն, աւետարանը փարփելու, դեւեր հանելու եւ հիւանդներ բժշկելու:

72 աշակերտներուն անունները որեւէ տեղ չեն յիշուիր, սակայն անոնք եւ Քրիստոսի կողմէ առաքելութեան կը դրկուին զանազան շրջաններ:

Տասներկու առաքելներու եւ 72 աշակերտներու նախատիպը կը գտնենք Հին Կտակարանին մէջ, երբ եբրայեցի ժողովուրդը անապատային թափառումներու ընթացքին կը հասնին Եդիմ, այնտեղ կը գտնեն 12 աղբիւրներ եւ 72 արմաւենիներ եւ այնտեղ բնակութիւն կը հաստատեն (տե՛ս Ելք. 15.27):

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ՀԱՐԱՏԱՅԵԱԼՆԵՐԸ ՄԻՇՏ ԱՐԹՈՒՆ ՊԼՏՔ Է ԸԼԼԱՆ

Եօթներորդ.- Խաչեալին զինուորը մշտաբարուն մարդն է: Սատանան բնաշի քնանար եւ չի մրափեր, բայց փա՛ որ մեր ամենակալ Աստուծոյն, որ ինք եւս չի քնանար ու չի մրափեր (Մղ. 121.4): Քրիստոսի զինուորները միշտ արթուն պետք է ըլլան: Հարկաւ խօսքը ֆիզիքական արթնութեան մասին չէ, այլ՝ հոգեւոր արթնութեան մասին: Անձի մը հոգին միշտ արթուն եւ աղօթքի մէջ կ'ըլլայ, երբ միացած է Քրիստոսի եւ լեցուած Սուրբ Հոգիով: Աստուծոյ զուակը կրնայ քնանալ, բայց անոր հոգին միացած Սուրբ Հոգիին՝ աղօթքի կը կենայ մինչեւ արշալոյս: Ինչպէս զինուորը կը հետեւի թշնամիին ամէն մէկ շարժումին, այնպէս ալ Խաչեալին զինուորները, արթնութեամբ պետք է հետեւին Չարին բոլոր շարժումներուն որպէսզի չյինան անոր լարած թակարդներուն մէջ:

ՄԵՐ ՍՈՐԿԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Ինչպէս Սատանան կը հետապնդէ հաւատացեալներու ամէն մէկ շարժումը, դուք ալ հետապնդեցէք իր ամէն մէկ քայլը, որպէսզի չխոցուէք ձեզ մեղքի նետով:

ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵԱՍ...

ԵՐԲ ԾՆՆՐ ՀԻՒՆԳՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՆՈՒՆՎԱՏՆԳԻՆ ՄԷՉ ԵՍ, ԿԱՐԱՎ՝ ՍԱՂՄՈՍ 38

Տէ՛ր, զայրոյթիդ մէջ մի՛ յանդիմաներ զիս, բարկութեանդ մէջ մի՛ պատժեր զիս: Արդէն նետերդ մարմինիս մէջ միտեցան, հարուածներդ ծանրացան իմ վրաս: Սաստիկ բարկութեանդ իբրեւ հետեւանք՝ մարմինիս վրայ առողջ տեղ չէ մնացած. մեղքիս իբրեւ հետեւանք՝ հանգրստութիւն չկայ բնաւ մարմնիս մէջ, որովհետեւ անօրէնութիւններս գլուխէս վեր բարձրացան, ծանր բեռի պէս կը ճնշեն վրաս: Յիմարութեանս պատճառով՝ նեխեցան ու փտեցան վերքերս: Կքած, ու չափազանց նուաստացած, ամբողջ օրը տրտում տխուր կը շրջիմ: Ներսս կարծես կրակի մէջ է, մարմինիս վրայ առողջ տեղ չէ՛ մնացած: Ամբողջապէս ուժասպառ եմ ու խորտակուած, ցաւէս կը տնքամ՝ մոռնչելու պէս: Տէ՛ր, դուն գիտես իմ բաղձանքս, եւ անտեղեակ չես հեծե՞ծանքներուս: Միրտս կը նուաղի, ոյժերս զիս կը լքեն, եւ աչքերուս լոյսը կը մարի: Բարեկամներս եւ ընկերներս հեռու կը մնան՝ հիւանդութեանս պատճառով: Նոյնիսկ հարազատներս ինձմէ հեռու կը մնան: Իսկ անոնք, որ իմ մահս կը կամենան, անոնք թակարդ կը լարեն, կործանումս ուզողները՝ սպառնալիք կը տեղան, եւ օրն ի բուն նենգութիւններ կը խորհին: Ես խուլ կը մնամ անոնց դիմաց ու չեմ լսեր, համը կը մնամ ու բերանս չեմ բանար: Այո՛, չեմ լսեր, ո՛չ ալ կ'ուզեմ պատասխանել: Բայց ես, ո՛վ Տէր, յոյսս քու վրայ դրած եմ: